

ԶԱՅՆ

ՀԱՄԱՇԵՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ Անվճար

ՌՈՒՍԱԿԱՆ «ԱԶՈՎ» ՆԱԿԻ ԲԺՅԻՆՎԻՆ ԿՎԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Կսկծեցուցիչ, ահագնապես խուժուժ գործերու ակամատես՝ չեն ուզեր անտարբերի մը հանցապարտ լուծուցումը վրաս առնել, այլ կուզեն գիտցածս հավատարմաբար պատմել քաղաքակիրթ Եվրոպայի մանուկին մեջ, սփոփանք մը փնտռելով հարյուրավոր մարդկային անմեղ արարածներու գերեզմանական բողոքը գեթ հրապարակելուն մեջ, քանի որ անգոր ակամատես մը եղա անոնց չարաչար մահվան:

Սեպտ. 26-ի (հ.տ.) առտուն էր: Ռուսա-

նավ նետեցի ինքզինքս: Երբ շոգենավ հասա, պատմեցին ինձի, թե 11 հայեր, թուրքերու յաթաղանեն ապաստան մը գտնելու հույսով նեվտած էին նավակներու մեջ և հալածական՝ դիմեր էին ամենն մոտի շոգենավը, ավստրիական Լոյտի «Վենյուս»-ը, բայց շոգենավեն իսկույն վեր առած էին սանդուղքը և նեվուկերի հարվածներով վռնտած էին խեղճ փախստականները, որոնք փութացր էին ապաստանիլ ռուսական դրոշի ներքև: Մեր շոգենավին հասած չհասած, հոն աշխատող թուրք գործավորները, իրենց գլուխն ունենալով ընկերության ծառայության մեջ գտնվող նավուղի դու-

կալ Աբրազկիչեն ստացա հետևյալ լրացուցիչ տեղեկությունները. «Տրապիզոնի շրջակայքի հայաբնակ գյուղերուն մեջ նույնպես սպանված են հայեր, իսկ տուները ավարի և կրակի տրված են: Շրջակայքի մեջ սպանված են մոտավորապես 1150 հոգի, բուն Տրապիզոնի մեջ 1650 հոգի»: Սև ծովը շարունակ դուրս կը նետե դիակներ, հավանորեն նավակներու մեջ սպանված. 26 տարեկան հայու մը վրա նավթ լեցուցած և այրած են, իսկ ուրիշ մը գլխատած են հրապարակով: Ես վերջացուցի: Չափազանցություն չկա գրածներուս մեջ: Ընդհակառակն

Տրապիզոն ապրող պարսիկներն անգամ իրենց կարելին ըրին, իրենց դրացի հայերուն ապաստան տալով: Իբրև բացառություն գտնվեցան կարգ մը ազնիվ թուրքեր, որոնք պաշտպանություն ընծայեցին, իսկ ուրիշներն ալ չեզոք դիրք բռնեցին: Ամեն պարագայի տակ արդյունքը այն եղավ, որ հայությունը թալանվեցավ և ունեցավ 2000-ի չափ սպանվածներ և վիրավորներ: Օտար պետությանց պաշտոնական ներկայացուցիչները մատը մատին չզարկին: Ֆրանսիական հյուպատոսը խորհուրդ կու տար ֆրեյերներուն, որ հայերուն ապաստան չտան, և այլն: Վալի Գատրի

1895Թ. ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԱՅԱՆԳԻ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԸ

կան շոգենավային ընկերության «Ազով» նավը Տրապիզոն հասած էր և ես ալ ցամաք ելած էի: Հանկարծ ժամը 16-ին քաղաքի հրապարակի վրա լսվեցավ ռեվոլվերի պայթյուններ և շատ չանցած սկսավ տոսկալի աղմուկ մը, վայնասուն մը և մոլեգին աղաղակներ՝ «Ձարկե՛ք կյավուրները»...

Խառնիճաղանճ բազմություն մը, բաղկացած թուրք նավավարներե, բեռնակիրներե, մսավաճառներե, զինված հեծրի Մարթինի հրացաններով, ռեվոլվերներով, յաթաղաններով ու դանակներով կը խառնվեր հրապարակը, կը խուժեր փողոցները, կը հարձակեր հայ խանութներուն վրա, անխնա կը զարներ դեմը ելած հայը, ավարի կուտար և կը կողոպտեր անոնց խանութները:

Դիակները շուտով սկսան դիզվիլ փողոցներու մեջ: Սոսկալի էր և հալածանքը փախչողներու ետևեն, կարծես վայրի գազաններու որս մըն էր, որ տեղի կունենար: Հարձակողը թուրքն էր ամեն հասակի, և զոհը հայն էր՝ այր, կին, տղա, ծեր ու մանուկ անխտիր:

Ավելի քան 500 հոգի բաղկացած այդ բարբարոսներու խուժքը ոչ մեկ արգելքի հանդիպելով ոստիկանության և զինվորներու կողմե, ահ ու սարսափ սկսավ սփռել ամբողջ քաղաքին մեջ: Գրիչս անգոր է, գեթ մերձավոր գաղափար մը տալու այն ողբերգական արհավիրքի մասին, որ պարզեց քաղաքը...

Ոհ, տոսկալի, ահագնապես տոսկալի էր լսել մահվան երկյուղեն սարսափած կիներու, աղջիկներու և տղոց աղեկտուր ճիչերն ու աղաղակները, որոնք իզուր օգնություն կը հայցեին այդ մարդակերպ գազաններեն:

Հրացանի հարվածներուն պայթյունը, արձակված քարերուն շայրուցը, կոտորված ու ջարդված դռներուն ճռնչյունը, փլցված տուներուն և վաճառանոցներուն դղրդյունը, մոլուխան հասած թուրք խուժանին աղաղակը, անկերպարան դիակներուն կույտերը երկու սեռի և ամեն հասակի հայերուն, որոնք արյան լճերու մեջ կը լողային, մարդկային չարաչարանքներու համայնապատկեր մը կը պարզեին:

Նահանգապետ Գատրի պեյ դուրս հանց ոստիկաններ և զինվորներ, թվով հարավ 200 հոգի, բերդին և քաղաքին համար ու թերևս հրամայեց իսկ անոնց հայերը պաշտպանել, սակայն ուրիշ բան մը տեղի ունեցավ. - զինվորները, իրենք ալ թուրք, վարակվելով այդ բյուրավոր խուժանի գիշախանձ խանդավառութենն, իրենց կարգին սկսան զարնել ու ավարի տալ հայերը: Ես չկրցա մնալ քաղաքին մեջ և շոգե-

նայիլը, կը հարձակին այդ խեղճերուն վրա, նույնիսկ ռուսական դրոշին ներքև խողխողելու և ծովը թափելու համար անոնք, բայց վրա կը հասնի նավապետին օգնականներեն Ա. Ի. Կոնստանտինովը, կը կորզե Իսմայիլի ձեռքեն դաշույնը, նավաստիներու օգնությամբ կը զսպե այդ



արիկաները և ներս կ'առնե ապաստան փնտրող հայերը, շատերը ծանրապես վիրավորված՝ գնդակներով և յաթաղաններով, որոնց հարկ եղած դարձանումները կ'ընեն այս տողերը ստորագրողը և կը կատարե նույնիսկ կարևոր վիրաբուժական գործողություններ:

Շոգենավը, որ նույն օրը պիտի մեկնե, հյուպատոսին կարգադրությամբ կը յետաձգե մեկնումը և կը սպասե ազդանշանին, ռուսահպատակները վտանգե ազատելու համար:

Սեպտ. 27-ին, ժամը 5-ին, հյուպատոսը պատշաճ կը դատե, որ թե իր ընտանիքը և թե իր մոտ ապաստանած հայերը թվով 100 հոգի փոխադրվին շոգենավ:

«Ազով» ընկերության գործակալը կը հաստատե, թե պաշտոնական տեղեկություն համաձայն 1000-ի կը հասներ սպանված հայերու թիվը և շրջականերեն տակավին լուր չկար, թե և կ'ըսեին, թե երեք հայաբնակ գյուղեր՝ Ձեֆանոս, Պայրամ և Թոնց հիմնահատակ ըրած և կրակի տված էին: Ատով բացատրվեցավ երեկվան մեր տեսած երկնքի կարմրությունը և հեռավոր բողբոջ:

Հոկտ. 2-ին եկավ ռուսական կես-մարտանավ «Տերեց»-ը, իսկ հոկտ. 3-ին դուրս հանեցին մեր մոտ ապաստանած հայերը և շոգենավը ծամբա ելավ: Նույն օրը մեր շոգենավային գործա-

շատ բան թերի է: Գրի առի ինչ որ տեսա անձամբ ցամաքին վրա և շոգենավեն հեռադիտակովս և ինչ որ Աբրազկիչը կրնար տեսնել իր գործատեղիեն, տունեն և դեպի ծովափ տանող փողոցներուն վրա: Անշուշտ պիտի գտնվին ուրիշ վկայություններ ալ լրացնելու համար սեպտ. 26-ի



թուրքաճակատական բարբարոսության այդ զարհուրելի ողբերգության նկարագրության ամբողջությունը: *Դոկտ. Ն. Պասալսկի*

ՕՏԱՐՆԵՐՈՒՆ ԴԻՐԸ

Հույներուն դիրքը ընդհանուր առմամբ հայերու հանդեպ նպաստավոր էր, եթե նկատի չառնենք մասնակի անձերն ու դեպքերը, որոնք ավելի ընչաքաղցության հետևանք էին: Տրապիզոնաբնակ եվրոպացիները մեծ աջակցություն ցույց տվին և ապաստան ընծայեցին իրենց ապավինած հայերուն, իսկ անոնց հիմնարկներուն և ձեռնարկներուն մեջ աշխատողները անձեռնմխելի մնացին: Հայապաշտպանության համար առաջնակարգ ապաստարան մը եղավ ֆրեյերներու դպրոցը, ուր հավաքված էր 2000-ի հասնող բազմություն մը, ուրիշ աղբյուրի մը համաձայն 700 կաթոլիկներ և 1400 լուսավորչականներ:

Ֆրեյերներու այս մարդասիրական վերաբերմունքը անցնելի մնացած է պոստահայ տարեգրության մեջ, անմոռանալի մնացած է մանավանդ Հայր ժողովը, որ իր անձը վտանգելով փողոց կելլե և թուրքերու ձեռքեն հայերը ազատելով դպրոց կը բերե:

պեյն ու Ալայ Գումանտանըն օրվա հերոսներն էին: Վերջինս հեծած իր ծիուկ վրա, թալանած ոսկիները տուն կը փոխադրեր:

1895-ի կոտորածներուն նկարագրականը պիտի ուզեինք փակել առաջնորդական փոխամորթ Ս. Վահան Ա. քին. Խոյյանի անտիպ մնացած հուշագրութենն քաղված հետևյալ ակամատեսի վկայություններով:

ԶԱՐԴԵՐՈՒՆ ԱԿԱՆՍԵՍ ՏԵՐ ՎԱՅԱՆԻ ՊԱՏԱՍՏԵՐԸ

- 1895-ի սեպտ. 13-ին Սուրբ Խաչի Վերացման տոնը կատարելէ ետքը, քաղաքի արևմտյան կողմի գյուղերը այցելության գացի: Իլէ գյուղին համար էլ դասատու մը հետս կը տանեի: Ութ-տասը օր հետո քաղաքեն վերադարձողներ սարսափով պատմեցին, թե քաղաքին մեջ ահագին տակնուվրայություն կար. կ'ըսեին թե Տրապիզոնի գումանտան Ահմեդ փաշան և Վանեն եկող Պահիրի փաշան օրը ցերեկով երկու հայ տղոց կողմե վիրավորված են Տրապիզոնի մեջ և այս դեպքին վրա թուրքերը սպառնական դիրքի մեջ պատաստ են կոտորածի:

Որչափ հնարավոր էր զգուշությամբ, գրեթե գաղտնի ճամբաներով, քաղաք վերադարձա և ինչ տեսնեմ, գործ, առևտուր, ամեն ինչ դադարած, ամեն ոք ահ ու դողի մեջ, գիշերները քուն չկա, մյուս կողմե թուրքերը զինված, պոռալով անճոռնի աղաղակներով ցույցեր, հրացանած-գոթյուններ կ'ընեն, տեղ-տեղ նույնիսկ պատուհանի փեղկեր, ապակիներ ու դուռներ կը կտորեն: Այս վիճակը կը տևե 7-8 օր:

1895-ի սեպտ. 26-ի գշ. օր մըն էր, մեր ժողովուրդեն լուր դրկողներ եղան, որ ցույցերեն վախցողներ կան, Տեր Հայրը թող գա խաչահանգիստ կարդալիք ընէ: Մասունքի խաչ և ուրար առած գացի: Գանձան մեկ-երկու բարեկամներ ըսին թե «կացությունը լավ չէ, մի քանի հայերու գրպանները խուզարկված են զենք փնտրելու համար» և այլն: Ինչ կ'ըլլա, ինչ չըլլար ըսելով վեց հարվածանի ատրճանակս մեջքս կապած էի 30 փամփուշտով. մեյնը խորհեցա տուն դառնալ և զենքը վար դնել, սակայն անցավ այս վարանումս և ճամբաս շարունակեցի:

ԿՈՏՈՐԱՅԸ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀՐԶԱԿԱ ՉՅՈՒՆԵՐՈՒՆ ՄԵՋ

1895 սեպտ. 25-ին վալին վերջնակապես իր դիմակը վար առած, առաջնորդական տեղապահ Տեր Վահանին հայտնեց, թե այլևս չի կրնար երաշխավորել

հայերու ֆիզիկական գոյությունը և նույն օրը զանգվածային ծերեքակալություններ կատարելով լեցուց բանտը:

Տրապիզոնի շրջակա գյուղերում մեծ մասը լեռնային անտառներով շրջապատված ըլլալով հայերը ապաստանեցան անոնց մեջ և անվնաս մնացին: Առավելապես վնասվեցան քաղաքամերձ գյուղերը: Շարք մը գյուղերու մեջ տնտեսական վնասը հասավ ահռելի չափերու. բացի կողոպուտեն հրո ճարակ դարձան հարյուրավոր տուներ: Ձեֆանոզի 70 տուներեն միայն հինգ տուն կանգուն մնացին: Այրված տուններու բնակիչներուն մեծ մասը փախավ Ռուսաստան: Պայրանի և շրջակայքի 48 տուններուն մեծ մասը մոխիր դարձավ, իսկ Կրոմիլայի 38 տուններն միայն վեց չվնասվեցան: Ծերունի Յովհ. քին.Մավյանը հրացանագարկ ընելեն ետք մարմինը կտրատեցին, իսկ 90 տարեկան ծերուկ Գրիգոր Սարգսյանն ու անդամալույծ Յովակիմ Զիբեարյանը գնդակահարեցին:

Միլեթիայի բոլոր տունները այրեցին և ժողովուրդը շատերու նման վանքը ապաստանեցավ:

Թուրքերով շրջապատված Տիվրանոզի և Մինասլիի տուններուն մեծ մասը կրակի տրվեցավ: Տեր Մաղաթիա Գահրիմանյան քահանան, Պողոս Վարդանյանն ու Յովակիմ Յովսեփյանը սպանվեցան: Փլաթանա ավանի եկեղեցվո թաղին հայերը, հալածանքե և կողոպուտներե թշվառացած, Ռուսաստան գաղթեցին: Իլանա գյուղի Մեղրիկցոց երկու տուները քանդեցին և մնացածները ավարի տրվեցան: Թարազըլարի բոլոր տունները մոխիր դարձան: Նշանավոր հովիվ Սիմավոնյանի բոլոր անասուններն ու Մալա թողած 600 ոչխարները հափշտակվեցան:

Սերա ծորի արևելյան Ծիֆրիկա գյուղի 36 տունները, նույնպես և Իլ և Աղոիտ գյուղերու հայկական մասերը հրկիզվեցան: Վերանա 85 տուննոց հայկական գյուղեն հազիվ տասնյակ մը կանգուն մնացին, իսկ քահանան՝ Տեր Մատթիա սպանվեցավ: Ամենն ապահով ու բախտավոր կարծված գյուղերու տուններուն առնվազն մեկ քառորդը այրեցավ, իսկ ավարի և կողոպուտի ենթարկվեցան, առանց բացառության, բոլոր գյուղական տունները:

Ս. Ամենափրկիչ վանքը, ուր ապաստանած էին 350 անգն այր մարդիկ իրենց ընտանիքներով, երկու անգամ հարձակում կրեց վայրենի տաճիկներեն: Ի վերջո առաջարկվեցավ անձնատուր ըլլալ: Հայերը ըսին. «Եթե ձեր կրոնքին վրա կ'երդնուք և կը խոստանաք, որ մեզմե ոչ մեկը պիտի չձերբակալեք, թույլ կուտանք, որ ներս մտնեք»:

Այս համաձայնությամբ, կառավարության առջև դրները բացվեցան: Հակառակ իրենց խոստումին, խիստ խուզարկություն եղավ, վանքի աշտարակի մեկ մասն քանդեցին, ձեղունները փլցուցին, իսկ վերադարձին ալ վանքի մարապա Քենենչեճիին տունը կրակի տվին և զինքն ալ սպաննեցին:

Գովաթայի Մեծ և Փոքր Շանա գյուղերու բարձունքներուն թառած հայ գյուղե-

րու մեջ մասնակի դեպքեր միայն պատահեցան: Այս մասին խոսված է Շանայի բաժնի մեջ:

ՍՅՈՒՄՆԵՆԻ ԻՆԷՆԱՊԱՆԵՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Թովալ Վաղարշակին կամ Սարիատին անունը հռչակված էր և ան մեր շրջանին համար համազոր էր Յունոներու և Արաբոներու: Այս էր պատճառը, որ Սյուրմենեի բարձրաբերձ և անտառապատ լեռներու կատարներուն թառած և 4-5 թաղերու բաժանված 90-95 տնվոր հայությունը ահավոր հարձակումներու ենթակա եղավ Սյուրմենեի ավազակներուն կողմե, Գատրի պեյի ղեկավարությամբ: Ավազակա-



պետն էր Իլիաս և կռիվները տևեցին բավական երկար և ընդմիջումներով:

Հայկական թաղերը իրարմե մինչև մեկ ժամ հեռավորություն ունեին և թուրքերը աշխատեցան անջատ-անջատ կտորել բոլորը, հաջողելով թալանել գրեթե բոլոր տունները, որոնք լքված էին շրջակա անթափանցելի անտառները ապաստանած ժողովրդին կողմե: Կռիվներու մեջ հերոսաբար ինկան Մարկոսյան Սարգիսն ու Եազըճյան Կարապետը:

Թշնամին իր 2000-նոց ուժով չհամարձակվեցավ առաջին հերթին հարձակվիլ Կատրաս և Էլենոնաս թաղերուն վրա, հակառակ անոր, որ անմարդաբնակ էին անոնք: Գյուղացիները կը դիմադրեին աներկյուղ շրջակա անտառներեն: Եվ սակայն, 200 զինյալ թուրքեր հայոց գնդակներու տարափին տակ կրցան մտնել անտառի խորերը և եկեղեցին գրավել: Եւ պղծել ենք այրեցին: Կռիվները, որոնց ընթացքին նահատակվեցավ Մարտիրոս

Աշճյան, վերջ գտան սեպտ. 30-ին: Սյուրմենեի հայերը քիչ և աղքատ էին և թալանելու շատ բան չկար, այդ պատճառով էլ ավարառու ջարդարարները Տրապիզոն և Բաբերդի կողմերը գացած էին: Ատոնք Տրապիզոն վերադարձան 20-25 նավակներով լեցուն ավարով: Իսկ Բաբերդի գյուղերեն բերին հսկա հարստություն: Միայն ճավարտի 400 թուրքեր առևանգած էին 60 հայ աղջիկներ...

Ընդհանուր ներուժն հետո հայերը իջան իրենց ավերակ գյուղերը, ուր տան պատերեն գատ բացարձակապես ուրիշ բան չէր մնացած: Այդ վիճակին մեջ իսկ թուրքերը մասնակի հարձակումներ կատարեցին դարձյալ հայերուն վրա:

Կտորածեն ետք, Վաղարշակ ստիպեց թուրքերը ավարը ետ վերադարձնել, ինչ որ կատարվեցավ մեծ մասամբ և հայերը վերսկսան շենցնել իրենց տարտղնված բույները:

ԿՈՏՈՐԱԾԸ ՆԱՀԱՆԳԻ ՄՅՈՒՇՆԵՐՈՒՆ ՄԵՋ

Տրապիզոն քաղաքեն և մոտակա գյուղերեն դուրս նահանգի մնացած մասերը մեծ մասամբ զերծ մնացին ընդհանուր կոտորածեն և թալանեն, բացի Ունիա քաղաքեն, որուն բարեկեցիկ հայ համայքն ալ գրեթե ոչնչացավ: Գյուղերուն մեջ ևս թալան և մասնակի ջարդեր տեղի ունեցան, բայց գյուղացիությունը ապաստանած էր անայի լեռները: Սամոնի մեջ սարսափ կը տիրեր, բայց թալան և կոտորած տեղի չունեցավ: Չարշամայի գավառին մեջ թեև հարձակումներ, սպանություններ և թալան եղան, բայց հայերու կողմե ցույց տրված ուժեղ դիմադրության շնորհիվ զանգվածային բնույթ չստացան: Մինաս Օղլիի խումբը և անունը, այս տեսակետով, ունեցավ մեծ նշանակություն և ազդեցություն: Կիրասն և Թիրեպոլի նույնպես զերծ մնացին ընդհանուր ջարդը: Ծովեզրյա այս քաղաքներուն մեջ տագնապալից օրեր ունեցավ Օրտուն, որ հաճախակի մղձավանջային օրեր անցուց: Վերին խավերեն կազմակերպված խուժանը քանի մը անգամ կազմ ու պատրաստ հարձակման դիմեց, խանութները զոցվեցան, բայց ջարդ տեղի չունեցավ. այսուհանդերձ քաղաքի հայերն ալ պատրաստ էին դիմադրելու: Օրտուն գրած են «Դրոշակ»-ին. «Թուրք խուժանը հոս ալ սեպտ. 29-ին, ուրբաթ օր, կեսօրվան ժամը չորսուկեսին զինված հարձակում մը ըրավ, բայց ամբողջ երիտասարդությունը պատրաստ էր կռվելու: ...Կառավարությունը խոհեմություն համարեց ամբողջ ցրվել:

Կիրակի օր ևս գյուղերեն 60 զինված թուրքեր եկան և աղաներու տունները ցրվեցան: Նույն գիշերը 600 զինյալներ ևս քաղաք մտան, որպեսզի հաջորդ օրը սկսին թալանը և կոտորածը: Բարեբախտաբար

Օրտուի համար չտեսնված տեղատարակ անձրև և փոթորիկ ծագեցավ և շատերը վատ նշան տեսան այդ բանի մեջ և ցրվեցան, թեև այդ օրը ամբողջ փողոց ելավ, հայերը խանութները զոցեցին և պատրաստվեցան կռվի, այս անգամ ալ լուր եկավ թե Տրապիզոն հասած է ռուսական նավատորմիըր:

Դեկտ. 3-ին Օրտուն նորեն հարձակման ենթարկվեցավ թուրք խուժանին կողմե. տեղի ունեցան թալան և սպանություններ. կարգ մը թուրքեր հագարապետ Յուսուֆ պեյի զլխավորությամբ ուզեցին անպատճառ ջարդել հայերը. բարեբախտաբար գայմագամը և ուրիշներ դեմ ըլլալով, աղետին առաջը առին, գույաղացիները սակայն ծանրապես տուժեցին: Ամեն տեղե սկսավ արտագաղթը դեպի Ռուսաստան:

ԿՅՈՒՄՈՒՆԻՏԱՆԵ

Կյունուշխանեի հայերը տեղյակ էին Բաբերդի և Տրապիզոնի ջարդերուն, գիտեին, որ Գատրի պեյը իրենց գայմագամին ալ պետք եղած իրահանգները տված էր գաղտնորեն: Գայմագամն ալ իր լրտեսներուն միջոցով իմացած էր, որ հայերը արդեն գիտեին կուսակալին կարգադրությունը զիրենք կոտորելու մասին և կեղծ միջոցներով կ'ուզեք ժողովուրդը հանգստացնել: Քաղաքի բոլոր լայտերները վառած կը պահեր, որպեսզի չարագործներ չկարենան գաղտնի շահատակություններ ընել, գիշերալվաղիկ պահակները կը շատցներ, իսկ ինքն ալ, վաճառական Հաճի Նշան Իսրայելյանին հետ շուկան, փողոցները, մինչև անգամ տունները մտնելով ժողովուրդը կը հանգստացներ, բայց միաժամանակ գաղտնի պատրաստություն կը տեսներ և խուժանը կը զիներ:

1895 հոկտ. 12-ին գյուղերեն եկած զինված ամբոխը պատրաստ է հարձակվելու: Նույն օրը Ս. Փրկիչ վանքի հովիվ Արշակը սպաննեցին և վանքի հոտն ալ քշեցին տարին: Յաջորդ օրը Տեր Սմբատ գնաց Արշակը թաղելու, բայց տեսնելով թուրք խուժանի վանքին մոտենալը, փախավ իր հետևորդներուն հետ: Թուրքերը վանքը թալանեցին, տանելով կամ փչացնելով մինչև վերջին շարժական իրը: Նույն օրը քաղաքին մեջն ալ սկսան թալանն ու սպանությունները: Հաճի Նշան Իսրայելյանի տունը պաշարվեցավ: Նշան հրացանով երեք-չորս ժամ դիմադրեց խուժանին և կատաղած ամբոխը հրկիզեց տունը, որով Նշան ստիպվեցավ բոցերու մեջն դուրս նետվիլ ու նահատակվիլ: Նույն օրը նահատակվեցան նաև յոթ հայեր: Կյունուշխանեցիները, որոնք աշնան հունը տուն բերելու համար Բաբերդի դաշտերը գացած էին, մեծ կորուստներու և թալանի ենթարկվեցան:

Այսպիսով Հայկական հարցը կամ Հայկական դատը, որ մեծ պետությունները 1878 -են ի վեր կը շահագործեին, վերջացավ հայկական ընդհանուր ջարդերով:

¹ Յովակիմյան Յ. Պատմություն հայկական Պոնտոսի. - Բեյրութ, 1967. - էջ 152-155, 162-165:

Վերջին տասնամյակներում Հայաստանում և Սփյուռքում լույս են տեսել Մեծ եղեռնին նվիրված բազմաթիվ գրքեր, որոնց մեջ հազվադեպ են արևմտահայության հերոսամարտերին նվիրվածները: Այդ բացը լրացնելու է գալիս ՀՀ պաշտպանության նախարարության քարոզչության (այժմ՝ տեղեկատվության) վարչության 2005թ. հրատարակած «Արևմտահայության ինքնապաշտպանությունը. 1915-1923» գիրքը (գլխ. խմբագիր՝ Վ. Իսրայելյան, խմբագիր՝ Ս. Դիլանյան, նկարիչ՝ Մ. Տոնոյան, գեղ. խմբագիր՝ Մ. Յալանուզյան): Հեղինակը՝ նույն վարչության աշխատակից, լրագրող, մայրը Տիգրան Դեվրիկյանը, մոտ 7 տասնյակ աշխատություններից, սկզբնաղբյուրներից ու մարտերի մասնակիցների հուշագրություններից օգտվելով նկարագրել է Ձեյթունի, Վանի, Վասպուրականի, Շապին-Գարահիսարի, Սասունի, Մուշի, Հայկական Պոնտոսի, Յոզղաթի, Ֆրնդըջաքի, Մուսա լեռան, Ուրֆայի, Խոտորքի, Մարաշի, Հաճընի, Այնթափի, Դաշտային Կիլիկիայի, Ջնյուռնիայի հայության ինքնապաշտպանական կռիվների ու հերոսամարտերի համառոտ տարեգրությունը: Մեր թերթի ընթերցողներին ենք ներկայացնում գրքի «Հայկական Պոնտոս» հատվածը:

ՏՐԱՊԻԶՈՆ ԶԱՐԱՔ

Տրապիզոնի ջարդերի ժամանակ թուրքերը քառասուն հայ տղամարդկանց բավական խոշոր գումարի փոխարեն խոստացան նավով հասցնել ռուսական ափեր: Նրանցից յուրաքանչյուրի դիմաց մի զինված թուրք նստեց: Շուտով զգալով խաբված լինելը, հայերը լուռ մի համաձայնությամբ որոշեցին պատվավոր ձևով մեռնել, առավել ևս, որ բոլորը թաքցրած ատրճակներ ունեին: Երբ նավը հեռացել էր

ափից ու նավավարի ազդանշանով թուրքերը կրակ բացեցին, սրանց շարժումներին ակնդետ հետևող հայերը պատասխանեցին: Ութսունմեկ հոգուց միայն երկուսը փրկվեցին:

Իսկ Գուրգեն և Պարույր Սարգսյան եղբայրները (ոստիկան և հրետանավոր սպա), իրենց Հարություն հոր հետ միասին մի խիզախ ծրագիր հղացան սպանելու կուսակալ Ջենալ Ազըմին: Պայթուցիկ ու դյուրավառ նյութերով քաղաքում հրդեհ-

ՏԻԳՐԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈՆՏՈՍ

Ներ սկսելուց հետո Պարույր Սարգսյանն իր տրամադրության ներքո գտնվող չորս թնդանոթներով պիտի շարժվեք քաղաքի հանգուցակետային հատվածները: Բայց կոտորածի ու հանընդհանուր շփոթության պայմաններում իրենց այս հանդուգ ծրագրին աջակիցներ չգտնելով, Սարգսյանների ընտանիքը որոշեց սեփական ուժերով գործադրել այն: Ծպտվելով կանացի հագուստներով Գուրգենն սկսեց հետապնդել կուսակալին, բայց ձերբակալվելով անմիջապես սպանվեց: Ազըմի սպանությունից հետո Հարություն հայրը պիտի հրդեհեր իրենց տունը՝ շարժվելով Պարույրին: Բայց Գուրգենի հետ գրեթե միաժամանակ ձերբակալվեց նաև Պարույրը, իսկ այս ամենին անտեղյակ հայրը, երկար սպասումից հուսահատված՝ հրկիզեց սեփական տունը:

Տարագրության հրամանին չհնազանդվելով՝ Սեդրակ Սեյրանյանի ու Երվանդ

Տերտերյանի ընտանիքները, ամրանալով Սեդրակի տանը, ժամեր շարունակ կռվելով, խոշոր կորուստներ պատճառեցին մեծաթիվ խուժանին և վերջին գնդակներով սպանեցին հարազատներին, ապա իրենց: Տրապիզոնի և շրջակայքի հայության գերակշիռ մասը ոչնչացվեց Գյունուշխանե-Երզնկա ճամպարիին: Իջևաններից մեկուն՝ Թեքքե կայարանում, աքսորյալներից շուրջ հարյուր տղամարդ ըմբոստանալով զինաթափեցին պահակներին ու հեռանալով լեռները՝ շարունակեցին զինված պայքարը:

ԵՆՍՈՒՐԱ

Տրապիզոնի մերձակայքում գտնվող և քսան հայկական գյուղերից կազմված այս գյուղախմբում եղեռնի նախօրեին ինքնապաշտպանության կազմակերպման ասպարեզում բավական աշխատանք էր կատարվել: Բայց կուսակալ Ջենալ Ազըմը մի շարք երևելի հայերի խաբելով կամ պարտադրե-

լով ուղարկեց հայությանը համոզելու, որ հանձնեն զենքերը և «զերծ մնան վտանգից»: Բացի այդ, ղեկավարների մի մասի սպանվելու, իսկ ինքնապաշտպանության ոգին հանդիսացող Միսաք Թռչալյանի՝ Կովկաս ուղարկվելու պատճառով ժողովրդին համախմբելու ունակ ղեկավարություն չկար, ու վերջին պահին հավաքական ինքնապաշտպանության փոխարեն մարտախմբերն ու ժողովրդի մի մասը քաշվեցին լեռները, հետո շատերը ետ վերադարձան...

Առաջին ընդհարումը եղավ տեղահանվող Շանա գյուղի մերձակա լեռներում, որը տևեց մինչ երեկո: Հայերը երեք գոհ ունեցան, իսկ Ասլան բեյի 500 հոգանոց չեթախունը, երեսուն սպանված ու վիրավոր տալով, հեռացավ այդ լեռներից: Հաջորդ ընդհարման ժամանակ հայտնվելով դարանում, խուճը ցրվեց:

Արդեն սեպտեմբերին Շանայի լեռներում ութ մեծ ու փոքր մարտախմբեր էին գործում, որոնցից միայն Հովհաննես Դուկասյանի խումբն էր կազմված բացառապես երիտասարդներից: Մյուսներում կանայք ու երեխաներ կային, իսկ ութերորդ խումբը ճոշարա գյուղի պատահիներն ու աղջիկներն էին, որոնց մասին մյուս մարտիկներն իմացան միայն... խմբի ջախջախումից հետո, երբ մնացորդները գտան իրենց:

Յոթ մարտախմբերը մշտական կապ ունեին միմյանց հետ, վտանգի դեպքում համախմբվում ու կռվում էին միասին: Գրեթե բոլոր խոշոր կռիվները եղան Արկուլա լեռան վրա: Մարտիկները նաև գիտեին, որ Մյուրմենի լեռներում երեսուն հոգանոց ուժեղ մարտախումբ է գործում Գաբրիել Մատելյանի և Սև Կարապետի հրամանատարությամբ ու արդեն մեծ սարսափ էր տարածել շրջակայքում:

Երկրորդ խոշոր ընդհարումն աշնան էր, երբ արդեն պետք էր պաշար հավաքել դիմավորելու 1916-ի ձմեռը: Մարտիկները հարձակվում էին քարավանների վրա, իջնում շրջակա հույն ու թուրք գյուղերը՝ և բոլորը գիտեին լեռներում ու անտառներում ապաստանածների մասին: Թուրք գյուղացիներն արդեն զգուշանում էին վերապրած հայ բեկորներին սպանելուց՝ լավ գիտենալով, որ անպատիժ չեն մնա: Հոկտեմբերի սկզբին թուրքերը մեծ հարձակում ձեռնարկեցին Արկուլա լեռան վրա, բայց այնպես էլ չհամարձակվեցին անտառ մտնել: Նաև խուսափում էին գիշերային կռիվներից, ու հայերը կարողանում էին խնայել զինամթերքը: Հոկտեմբերի վերջին Մեհմեդ անունով ծանոթ մի թուրք, ով միշտ սնունդ էր բերում մարտիկներին և վայելում նրանց լիակատար վստահությունը, խաբելով համոզեց, թե որոշ գումարի դիմաց բոլորին կարող է նավերով անցկացնել Ռուսաստան: Կառավարությունը ծովափին մեծ դարան սարքեց, բայց վերջին պահին մարտիկների փորձառությունը հուշել էր ողջ ժողովրդին միանգամից չիջեցնել ծովափ: Ու երբ թուրքերը հարձակվեցին, ժողովուրդն առանց խուճապի քաշվեց լեռները, իսկ մարտիկները հանգիստ ճեղքեցին պաշարումն ու ապշած թուրքերի աչքերի առջև վերստին բարձրացան Արկուլա: Նոյեմբերի վերջին սկսվեց հայտնի հրոսակապետ Լուսիկ չաուշի հարձակումը, որի շուրջ 300 հոգանոց խումբը կազմված էր կառավարությունից հետապնդվելով տարիներով անտառներում ապրած ավազակներից: Տեղահանությունների սկզբից սա հաջողությամբ հետամուտ էր եղել փախստական հայեր որսալու և նախկին ավազակից շուտով վերածվել մեծ հերոսի: Համդուզն ու անսպասելի հարձակմամբ բավական առաջանալով Լուսիկի կարողացավ խզել կապը մարտախմբերի միջև և բավական ջլատել հայերի ուժերը: Սկսվեց երեքժամյա կատաղի մերձամարտ. երկու կողմերի համար էլ այլևս կյանքի ու մահվան պայքար էր, ոչ ոք տեղի չէր տալիս: Բայց թուրքերը մեկնեցին փախան: Հայերը բավական սպասելուց հետո միայն հասկացան, որ դա ծուղակ չէ, ու թշնամի իսկապես փախել է: Պատճառը շուտով հասկացան՝ թփերում գտնվելով Լուսիկի ու նրա օգնական, հայակեր թուրքերի դիակները: Հաջորդ օրը մարտախումբը Կալաֆկա սարից հանգիստ դիտում էր, թե մի քանի հազար զինված թուրքերն ինչպես պաշարեցին Արկուլան, աննկարագրելի ուժգնությամբ 4-5 ժամյա հրածոթյունից հետո գրոհեցին անմարդաբնակ լեռն ու շուրջ 40000 փամփուշտ վատնելով իրենց

թողած հինգ դիակները գտան միայն: 1916-ի կեսերին ռուսական զրահանավոր տասնմեկ մարտընկերների հետ վերադարձավ Եոնուրայի գյուղախմբի ինքնապաշտպանության ոգին հետագայում Բաբվի 30000 հայության գլխավոր դահիճներից մեկի՝ Ադրբեջանի ներքգործնախարար Բեյբուր խան Ջիվանշիրի ահաբեկիչ Միսաք Թռչալյանը: Սև ծովում ռուսական առավելագույն զորքերի հրամանատարությունը նրանց ուղարկել էր հետախուզական առաքելությամբ, իսկ Թռչալյանի հիմնական նպատակը լեռներում ապաստանած հայերին փրկելն էր: 1915-1916թթ. սաստիկ ձմեռ էր: Վերապրածները փակվել էին քարայրներում, ու նրանց գտնելն անկարելի էր: Միսաքը ենթադրել էր, որ ինքնապաշտությունը լրիվ ծախսով է, առավել ևս, որ հայկական բոլոր գյուղերը լցված էին թուրք զաղթականներով: Բայց մի վերջին հույսով հանդիպեց հայտնի հայակեր Իսմայիլ բեյին ու համոզվելով, թե ռուսներն օր օրի գրավելու են Տրապիզոնը, համագործակցություն առաջարկեց: Սարսափած գա-

կողմում ամեն ինչ լավիղ համատարած կրակն էր, չորրորդ կողմում բազմահազար թշնամին: Մարտիկները որոշեցին յուրաքանչյուրը մեկ կնոջ կամ աղջկա հետ ճեղքել պաշարման շղթան: Մուսթ ընկնելուն պես, թուրքերից ընդամենը 7-800 մետր հեռավորության վրա, զարմանալիորեն անկատ կարողացան անցնել և դուրս գալ սեղմվող հրե օղակից: Իսկ մի քանի օր անց իմացան, որ նույն այդ օրը ռուսները գրավել էին Ռիզեն ու որպես ազդանշան, լեռնագագաթներից մեկի վրա հսկայական խարույկ վառել, որն իրենք տեսել, բայց նշանակությունը չէին հասկացել: Ռուսական հարձակումից սարսափահար թրքությունը գաղթում էր, ու վերապրած հայությունն այլևս փրկված էր: Անվտանգ, բայց սովահար վիճակ էր: Մեկնեցին Մաշկայի շրջան և ապրիլի 16-ին, երբ ռուսական զորքերը մտնում էին Տրապիզոն, իրենք հունական Լիվերա գյուղի մերձակայքում գտան շուրջ 400 փախստական հայերի, որոնց վաղուց զոհված էին կարծում: Ապա անցան ռուսական զրավման գոտի, մար-

հողներին: Հինգ օր շարունակ վախենալով անտառ մտնել՝ թշնամին անհմատ կրակում էր ծառերի վրա և միայն օգնական ուժ ստանալուց հետո գրոհով մտան Արկուլայի արդեն դատարկ անտառները, իսկ մարտիկները Կալաֆկայի բարձունքներից դիտում էին անօրինակ այդ «պայքարը»: Բայց հարյուր հնչուն ոսկու անուն լսելով թրքությունը ոտքի էր ելել ու կուսակալի հավաքած 2500-անոց ուժը մի քանի օրում կրկնապատկվեց: Թշնամին ի վերջո հասավ Կալաֆկա ու ծյան վրայի հետքերից հասկանալով, որ մարտիկներն անտառ են մտել, վախեցած վերադարձավ գյուղ: Գրեթե սնունդ չունեցող և սովահար խումբը կենտրոնացավ հազիվ 1000 մետր շրջագծով անտառապատ բարձունքում՝ միաժամանակ հսկելով ճանապարհն ու բոլոր կարևոր կետերը: Վիճակը բավական լուրջ էր, ու կարգադրվեց նախահարձակ չլինել, թուրքերի երթևեկը չարգելել, իսկ անտառ մտնելիս՝ հինգ վեց քայլից մոր միայն կրակել: Հազիվ էին մտնել իրենց աղքատիկ ու անալի ապուրն ուտելու, երբ թշնամին երեք ուղղություններով անցավ հարձակման: Կատաղի կռիվը տևեց մինչ ուշ գիշեր: Թուրքերն անգամ ինքնաթիռ օդ բարձրացին, որը սակայն, թռիչքի ընթացքում խափանվելով ծովն ընկավ: Գիշերը ճեղքելով պաշարումը՝ մարտիկները քաշվեցին Արկուլա, որն ինքնապաշտպանության համար առավել հարմար վայր էր: Ի դեպ, վաթսուն հոգանոց խմբում միայն քսաներեքն էին մարտիկներ, իսկ մյուսները կանայք, երեխաներ ու ծերունիներ էին: Առավոտյան թուրքերը հասկացան կատարվածը, բայց արդեն հարյուրից ավելի զոհ ունեին և չհամարձակվեցին գրոհել Արկուլան, այլ միայն հրդեհեցին անտառները՝ հուսալով գեթ այդ կերպ ոչնչացնել մարտիկներին:

Ի մանալով Ռիզեի անմահ մասին խումբը փորձեց անցնել ռուսական զրավման գոտի, բայց ռուսները հարձակումը կանգ առավ, ու իրենք մնացին ճակատ մետրոլ թուրքական զորքերի խմբավորման անմիջապես կենտրոնում: Անգամ այդ վիճակում, երբ ամեն պահի կարող էին նկատվել ու գլխովին ոչնչանալ, գտնվելով սպանեցին տեղի հայության գլխավոր ջարդարները մեկին, ազատեցին թուրքերի առևանգած մի քանի հայուհիների: Ի վերջո մեծ արկածներով անցան ճակատի գիծը:

Իսկ 1917թ. օգոստոսի 15-ին արդեն ռուսական բանակի հակահետախուզությունում ծառայող Միսաք Թռչալյանը մի գործակալի հետ հանձնարարություն ստացավ ոչնչացնել գիշերները պարեն ու ռազմամթերք փոխադրող թուրքական նավակները: Առաջադրանքի կատարումից հետո տեսնելով թրքության բարոյալքված վիճակը, ռուս հրամանատարն առաջարկեց ծովային հրանոթների կրակի աջակցությամբ այդ փոքրիկ ջոկատով գրոհել մերձակա Թերմե քաղաքը: Ռազմագիտական որոշ խորամանկությունների միջոցով իրենց անհամեմատ մեծ ուժ ցույց տալով՝ ջոկատն արագորեն գրավեց ճանապարհի մի քանի գյուղերը, իսկ երբ հասան Թերմե, պարզվեց, որ քաղաքի 10-12000-անոց թրքությունն արդեն փախել էր: Հայ մարտիկները պայթեցնում էին զինապահեստներն ու պետական կարևոր շենքերը, երբ հանկարծ Թերմեի մերձակա անտառից անսպասելիորեն հրածոթյուն ու ձեռնառումների պայթյունների ձայներ լսվեցին, ապա քաղաք մտան մոտ յոթանասուն հայ վերապրածներ՝ մարտիկներ, ծերեր, կանայք ու երեխաներ, որոնց առաջնորդը Չարշամյա գյուղի քահանա Քալենյանն էր, ում թուրքերը «Խենթ քահանա» էին կոչում: 1915-ին Չարշամյայի տեղահանության ժամանակ մարտախմբով լեռները քաշվելիս նա իր տան դռան վրա թուրքերեն գրություն էր թողել. «Տանն իմ ընտանիքի հանգիստը խանգարողի հերը կանթոն, շանսատակ կանեն, լինի նա գինձորական, պետական պաշտոնյա, թե անտիկան»: Մոտ տեղ ամիս թուրքերն այդ տունը չմտան: Իսկ հետո մեծաքանակ խուճանը եկավ ու իմնահատակ ավերեց տունն էլ, Չարշամյան էլ:

Այս խումբն իր համդուզն գործողությունների շնորհիվ մեծ հռչակ էր ձեռք բերել ողջ շրջակայքում: Իսկ քահանան, հոտի հետ անցավ Ռուսաստան, պատերազմի ավարտից հետո վերադարձավ և 1922-ին երկու խմբապետների հետ ծերբակալվելով ողջակիզվեց քեմալականների ձեռքով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈՆՏՈՍ



զանն առերես համաձայնեց ու անմիջապես մատնեց: Կառավարությունն անգամ կալանավորներին ազատ արձակելու գնով հնարավորինս ուժեղացրեց ծովափի պաշտպանությունը՝ անկարելի դարձնելով Թռչալյանի խմբի վերադարձը ռազմաճակ: Բայց այս ամենի արդյունքում Միսաքը ի վերջո կարողացավ միանալ լեռներում ամրացած մարտիկներին:

1916-ի փետրվարին Շանա գյուղում եղավ նախավերջին ու ամենաուժեղ կռիվը, որը կանոնավոր ճակատամարտի բնույթ ուներ: Մի քանի հազարանոց խուճանն ու բանակային ստորաբաժանումները խայտառակ պարտություն կրեցին: Մուսթ ընկնելուն պես թուրքերը դարձրեցին կռիվը, իսկ հայերը տեղափոխվեցին Կալաֆկա: Հաջորդ օրը վաղ առավոտից վերստին հարձակման անցած թշնամին, դարձյալ տասնյակ հազարավոր փամփուշտ վատնելով, կեսօրից հետո նոր կարողացավ գրավել այլևս դատարկ Արկուլան ու «հաղթանակը» տոնեց չրադարող համազարկերով:

Արդեն հուսահատված կառավարությունն ազատ արձակելով հայերի դեմ ուղարկեց նահանգի բոլոր կալանավորներին, և 4000 հոգի շրջապատման նեղ օղակի մեջ առան Կալաֆկան: Սա ամենաերկար ու ծանր կռիվն էր: Թուրքերն ուղղակի հնձվում, բայց շարունակում էին առաջանալ: Կեսգիշերից հետո էլ կռիվը դեռ շարունակվում էր, մինչև մարտիկները կանանց ու երեխաների հետ կարողացան ճեղքել պաշարումն ու հեռանալ: Իսկ հաջորդ օրը մարտախմբերը վերստին Արկուլայում էին:

Ապա սննդի ու զինամթերքի պակասի պարտադրանքով սյուրմենցիները վերադարձան իրենց լեռները, Կալաֆկայի մարտախմբերը մնացին իրենց երբեմնի գյուղերի մերձակայքում, իսկ մեծ մասը տեղափոխվեց Արկուլա: Իսկ արդեն փետրվարի կեսերին թշնամու բոլոր գյուղերը մեծ եռուզեռի մեջ էին: Շուտով բոլոր կողմերից հրդեհեցին Արկուլայի անտառները: Երեք

տիկներից երեսունհինգն իսկույն զինվորագրվելով՝ մեկնեցին ռազմաճակատ: Բայց առանձնապես մարտիկների նկատմամբ ռուսական հրամանատարությունն անթաքույց անբարյացակամ էր:

Վերապրածներից շատերն ի վերջո հաստատվեցին Սոչիում ու շրջակայքում:

Այս դեպքերի անկեղծ, անմիջական նկարագրությունը մեզ է հասել նաև Միսաք Թռչալյանի «Օրերուս հետ» հուշագրության շնորհիվ: Թռչալյանի մարտախումբը ոստիկանության հետ մի խոշոր ընդհարումից հետո սկսեց ներկայանալ իբրև կառավարության դեմ ըմբոստացած թուրք զաղթականներ, որոնք կառավարության հրահրմամբ հայերի կոտորածներից հետո վախենալով ռուսներից՝ թողել էին իրենց բնակավայրերը, իսկ այժմ կապ են հաստատել լեռների հայ մարտախմբերի հետ, որոնց կազմում նաև թուրքեր կան: Արագորեն մեծ հեղինակություն ձեռք բերեցին, քանի որ թրքությունը վախեցած էր, իսկ հարազատ կառավարությունից՝ զզված: Ոստիկանության հետ ընդհարման դեպքն էլ թուրքերն ամենուր բավական չափազանցված էին պատմում, և շուտով շրջակա թրքությունն աստիճանաբար միացավ իրենց ըմբոստ ու հեղափոխական «հայրենակիցներին»՝ հոժարակամ զենք, փամփուշտ ու մնացյալ անհրաժեշտը մատակարարելով շրջանի անօրինակներ տեր ու տիրակալներին, որոնք մի մասն արդեն բավական հարմար տեղավորվել էր թուրքերի լավ տներում: Այս տարօրինակ տիրապետության վեցերորդ օրը մեծաքանակ զորքը պաշարեց գյուղը: Քսանհիկ-երեսուն մարտիկներն ամրացան մի քանի տուն-դիրքերում, իրենցից տասնհինգին ցրելով լեռան տարբեր կողմերում ու կարողացան մեծաքանակ ուժի պատրաստեղծել: Իսկ իրենց միացած թուրք «ըմբոստներից» չլստահելով, տեղակայել էին երկրորդական ու անկարևոր դիրքերում, և շուտով նկատեցին, որ սրանք ավելի շատ իրենց վրա են կրակում: Ծանր այդ կռիվը տևեց մինչ ուշ գիշեր: Հարձակվող թշնամին, հիսուն զոհ տալով, ոչ մի հաջողության չհասավ, անգամ հայկական տուն-դիրքերը չկարողացավ մեկուսացնել միմյանցից: Ոստիկանների հետ առաջին ընդհարման ժամանակ զերի վերցվածներին զինաթափելով՝ ուղարկել էին Տրապիզոն՝ կուսակալ Ջեմալ Ազմին նամակով խնդրելով հաջորդ անգամ իրենց վրա ուղարկվելիք ժանդարմներին զինել ավելի ժամանակակից զենքերով, հասկացնելով, որ բոլորին սպանելու կամ զինաթափելու են: Կատաղած կուսակալը ոչ միայն ներում չընդրեց բոլոր ավազակներին, հանցագործներին ու դասալիքներին, այլև բերված յուրաքանչյուր հայի գլխի դիմաց հարյուր հնչուն ոսկի խոստացավ և մարտիկների դեմ 2500 հոգանոց զինված ուժ հանեց, որոնցից 800-ը բանակային, իսկ 300-ը՝ ժանդարմական ստորաբաժանումներից էին: Թշնամու մի մասը, Տրապիզոնից հարավ-արևմուտք գտնվող լեռներում եռօրյա ապարդյուն կռիվներում տասնյակ զոհեր տալուց հետո, նահանջելով միացավ Շանա գյուղը գրո-

Избиения армян в 1895-1896 гг.¹

(По документам французской „Жёлтой книги“)

В конце 1895 г. и в начале 1896 г. в течение полугода происходили по всей Малой Азии, в городах и деревнях, населенных армянами, ужасающие организованные массовые избиения, пред которыми поблекли даже турецкие зверства в Сасуне. Исходным моментом послужила мера, обещавшая армянам начало умиротворения. После упорного сопротивления султан вынужден был утвердить в октябре 1895 г. проект реформ, выработанный для шести армянских вилайетов представителями России, Франции и Англии, и вслед за этим началась резня и грабеж армян. В двух томах *Жёлтой книги* приводится масса потрясающих подробностей, из которых мы заимствуем лишь небольшую часть.

А) Трбизонд

Трбизонд, куда раньше других пришли вести из столицы, первый подал пример избиения армян. Уже 5 октября французский консул телеграфировал о начале „резни и грабежа“. В последующих донесениях он, между прочим писал:

„ Лица, видевшие город за несколько минут до начала убийств, - писал в своей депеше Камбон от 15 октября 1895 г., - никак не могли предвидеть готовых свершиться так близко событий. Толпа народа, занятая своим обычным делом, наполняла улицы. Теперь вполне доказано, что мусульмане без всякого сигнала, дружно и одновременно бросились на армян. Рабочие-наильщики для внутренней разности, принадлежащие большей частью к армянским артелям, находились по своим делам в большом количестве около таможи: они были убиты. Несколько несчастных, попытавшихся спастись, переправившись на лодках на суда, стоявшие в порту, были убиты лодочниками ударами весел: один был выброшен в море и побит камнями. На всех улицах и площадках избивались встречавшиеся армяне, причем их добивали с неслыханной жестокостью. Торговцев вытаскивали из их магазинов и отдавали в руки убийц.

В самое короткое время убийства были кончены. Тогда толпа ринулась грабить лавки. На улицах попадались носильщики, уносившие товары, и никто не мешал им в их грабеже.

Утверждают, что при этом солдаты и заптии не только не препятствовали этому, но даже поощряли к тому. Мне рассказывали, например, что в одном месте мятежники не могли взять армянский дом, так как их выстрелы (ружья) не достигали далеко; солдаты, увидев это, сняли с себя куртки и открыли огонь совместно с убийцами. Во всяком случае я могу засвидетельствовать de visu, что заптии, занимавшие полицейский пост, стояли с оружием в руках в оборонительном положении, не делая ни малейшей попытки остановить мятежников.

Точное число жертв еще не приведено в известность. Власти определяют его в 180 человек; но, судя по всему, число убитых в г. Трбизонде наверно свыше 500. Почти никто из армян не вернулся домой. Фреры (французские монахи) дали приют 3300 лицам. По официальному объявлению, поводом к резне послужил выстрел из револьвера, сделанный армянином и ошибочно понятый мусульманами. Одновременное начало резни во всех частях города делает это объяснение совершенно неправдоподобным. Это был, не подлежат никакому сомнению, заговор, тщательно обдуманый (un complot soigneusement regle). Участие регулярного войска в преступлениях и допущение грабежа- говорят сами за себя“.

Из донесения русского консула в Трапезунде послу в Константинополе Зиновьеву

4 ноября 1900 г.

Меры по взысканию недоимок отличаются особенной строгостью в пределах Эрзерумского вилайета. При полном отсутствии всяких промыслов и заработков внутри страны, разоренные и лишенные последнего куска хлеба армянские семьи устремились для спасения от голодной смерти в Трапезунд и в окрестные селения. Особенно возмутительным представляется тот факт, что конфискации подвергается имущество не только семейств армян, убитых в 1895-1896 годах, но также и тех, отцы и сыновья коих находятся в России и не могут вернуться на родину вследствие разосланного в прошлом году всем валиям строжайшего предписания о безусловном недопущении обратного возвращения из наших пределов турецких армян без различия сословий и состояния.

Поддержка 100 семейств этой категории, прибывших в Трапезунд преимущественно из Байбуртского округа Эрзерумского вилайета, особенно пострадавшего в 1895 году, ещё более увеличила крайне стеснённое материальное положение здешней армянской общины, насчитывающей ныне в числе своих членов весьма незначительное число состоятельных людей...

Вице-консул в Самсуне послу в Константинополе Зиновьеву

Из письма N 374 Самсун, 12 сентября 1901г.

...Самсунское армянское население крайне расстроено опять известиями, распространившимися на днях, о происходивших недавно во внутрь страны, а именно в Халебском, Эрзерумском и Битлисском вилайетах беспорядках и о будто бы резнях близ Сасуна и Вана.

В нашем санджаке, хотя и всё обстоит, так сказать, благополучно, всё-таки следует заметить, что со времени первых армянских неурядиц положение несчастных армянских поселян стало с каждым годом ухудшаться, и продолжающееся постоянно сурово-притеснительное обращение к ним турецких властей (при взимании в особенности бесчисленных налогов, лежащих на них тяжёлым бременем) довершает их бедствие.

За последние 10 лет из этого санджака много армянских крестьян выбыло за границу и более не возвращалось. Большая часть их преследовала в нашу сторону, и поселились они вдоль кавказского побережья.

В 1890 году во всем санджаке считалось еще более 22.000 армян, тогда как в настоящее время их всего около 12.000 человек. которых распределяют следующим образом по городам:

В Самсуне	2.500 чел.
В Чаршамбе и окрестных деревнях.....	7.200 чел.
В Терме, Уние, Фаше и окрестных деревнях.....	1.500 чел.
В Бафре и окрестных деревнях.....	800 чел.
Итого.....	12.000 чел.
Всего армянских деревень в санджаке ныне насчитывают 30, в каждой от 50 до 70 дворов.	

Джуидичи

¹ Геноцид армян в Османской империи.— Е., 1983. — с. 131-132, 162-163.

Старый церковный колокол Буденновска и армянское знамя призывают к возведению армянского храма



